ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարության «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը և տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը սահմանելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ

ՀՀ կառավարության որոշման նախագծի Հավելված 1-ի՝

1. 19-րդ կետի 5)-րդ «Գույքը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նվերը ստանալու հանգամանքների, իրավիճակի նկարագրությունը, նվիրող կողմի վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը՝ ըստ անհրաժեշտության…» ենթակետում առկա է վրիպակ. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի մասով հղման մեջ, որը նման կարգավորում չի պարունակում և չունի 4-րդ մաս: Համանման վրիպակ կրկնված է նաև որոշման նախագծի հավելված 2-ի 60-րդ կետում:
   Առաջարկություն
   Հստակեցնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին հղումը և կատարել ուղղում: Նույնը վերաբերում է հավելված 2-ի կետ 60-ին:

2. 23-րդ կետում՝ «Այն դեպքում, երբ գույքն առերևույթ սույն որոշման Հավելված 3-ով սահմանված կարգով ոչնչացման ենթակա գույք է, Լիազոր մարմինը սույն Կարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետի հիման վրա առաջարկում է ոչնչացնել գույքը՝…» նախադասության մեջ «սույն կարգի 20-րդ կետը» ընդհանրապես ենթակետեր չունի և այն վերաբերում է «20. Դիմումին կցվում են գույքի նկար/ները, ինչպես նաև նվերների հաշվառման ռեեստրում նվերի վերաբերյալ գրանցված տեղեկատվության վերաբերյալ քաղվածքը, եթե Լիազոր մարմինն էլեկտրոնային հասանելիություն չունի նվերների հաշվառման ռեեստրում գրանցված համապատասխան տեղեկատվության» կարգավորմանը:
   Առաջարկություն
   Հստակեցնել «սույն կարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետի հիման վրա» տրված հղումը և վերացնել անհամապատասխանությունը՝ կատարելով ուղղում 23-րդ կետում:

ՀՀ կառավարության որոշման նախագծի Հավելված 2-ի՝

3. Կետերի համարակալումների հաջորդականությունը խախտված է: I և II բաժինների համարակալումը ավարտվում է 3-րդ կետով, իսկ IV-րդ բաժնի համարակալումը սկսում է 25-ից:
   Առաջարկություն
   Անհրաժեշտ է միասնականացնել որոշման նախագծի հավելվածներում կետերի հաջորդականության սահմանման մոտեցումները:

4. 3-րդ կետում նշված «սույն որոշման Հավելված 1-ի կետով սահմանված դեպքերում Լիազոր մարմնի կողմից տրված մասնագիտական խորհրդատվության և դրա հիման

վրա՝ գույքի տնօրինման արդյունքում հնարավոր կոռուպցիոն ռիսկի գնահատման արդյունքում…» նախադասության մեջ պարզ չէ, թե հավելված 1-ի որ կետով է սահմանված Լիազոր մարմնի կողմից տրվող մասնագիտական խորհրդատվությունը:

Առաջարկություն

Հավելված 2-ի 3-րդ կետի «հավելված 1-ի» բառերից հետո լրացնել կոնկրետ կետի համարը կամ կետերի համարները:

5. 25-րդ կետում նշված է «հիմք ընդունելով սույն կարգի Հավելված N 1-ի հիման վրա Լիազոր մարմնի մասնագիտական խորհրդատվությունը և…» շարադրանքը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հավելված 1-ը ամբողջությամբ չի վերաբերում Լիազոր մարմնի մասնագիտական Խորհրդատվությանը:

   Առաջարկություն

   Հավելված 2-ի կետ 25-ում «Հավելված 1» բառերից հետո հստակ նշել հավելված 1-ի այն կետերը, որոնք կարգավորում են Լիազոր մարմնի կողմից խորհրդատվության տրամադրումը:

6. 39-րդ կետում նշված է, որ «Սույն գլխով սահմանված կարգով… » բառերը: Նշված հավելվածում գլուխներ առանձնացված չեն:

   Առաջարկություն

   Հավելված 2-ի 39-րդ կետում «Գլուխ» բառը փոխարինել «կետով» բառով:

7. VIII-րդ «Գույքի տնօրինման նպատակով կոռուպցիոն ռիսկերի գնահատումը» վերտառությամբ բաժնում ներկայացված կարգավորումները իրենցից ուղղակիորեն չեն ներկայացնում գույքի տնօրինման եղանակի տեսակ: Դրանք հանդիսանում են գույքի օտարման եղանակների ժամանակ մեթոդաբանական պարզաբանում, թե կոռուպցիոն ռիսկերը ինչպես պետք է գնահատվեն և ինչպես պետք է խուսափել նման ռիսկերից:

   Առաջարկություն

   Հավելված 2-ի VIII-րդ բաժնում ներառված կարգավորումները տեղակայել հավելված 2-ի մեթոդաբանական բաժնում:

8. IV-րդ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրումը» բաժինը նույնպես իրենից չի ներկայացնում գույքի օտարման եղանակ:

   Առաջարկություն

   Հավելված 2-ի IV-րդ բաժնի կարգավորումները շարադրել հավելված 2-ի՝ գույքի օտարման համապատասխան եղանակները բաժիններում, կամ էլ ներառել հավելված 1-ում կամ ներկայացնել ինքնուրույն հավելվածի տեսքով:

ՀՀ կառավարության որոշման նախագծի Հավելված 3-ի՝

9. 8-րդ կետում նշված է «Սույն որոշման Հավելված 4-ով սահմանված գույքի ոչնչացման գործընթացը» նախադասությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն որոշման Հավելված 4-ով սահմանված են շուտ փչացող գույքի ցանկը, այլ ոչ թե ոչնչացման գործընթացը: Ոչնչացման գործընթացը սահմանված է հավելված 3-ով:

   Առաջարկություն

   Հավելված 3-ի 8-րդ կետը խմբագրել այն հաշվով, որ ներկայացվի ոչնչացման ենթակա գույքի ցանկը, այլ ոչ թե գործընթացները:

10. 11-րդ կետում գույքի ոչնչացման հանձնաժողովի կազմի նկարագրման ժամանակ նշված է «ինչպես նաև սույն հավելվածի 10-րդ հրամանով ուղղակիորեն նշված այլ պաշտոնատար անձինք՝ Կոմիտեի ղեկավարի հայեցողությամբ» բառերը: Նշված նախադասության մեջ առկա է շարադրանքի վրիպակ՝ «հավելվածի 10-րդ հրամանով» բառերի տեսքով:
    Առաջարկություն
    Հավելված 3-ի 11-րդ կետում «Սույն հավելվածի 10-րդ» բառերից հետո ավելացնել «կետով ընդունված» բառերը:

11. 12-րդ կետում նշվում է, որ «Կոմիտեի գլխավոր քարտուղարը կամ աշխատակազմի ղեկավարը հանդիսանում է ոչնչացման ենթակա գույքի Հանձնաժողովի քարտուղար…»: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հավելված 3-ի 10-րդ կետում այդ մասին արդեն նշված է:
    Առաջարկություն
    Հավելված 3-ի12-րդ կետից հանել «Կոմիտեի գլխավոր քարտուղարը կամ աշխատակազմի ղեկավարը հանդիսանում է ոչնչացման ենթակա գույքի Հանձնաժողովի քարտուղար» բառերը: